

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10
ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

20. 04. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ.Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Վ.Հովհաննիսյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Ս.Խալաթյանը, Ս.Ղուբաթյանը, Ն.Սարգսյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա.Չատինյանը - ԱԽ, Լոռու մարզային վարչության ներկայացուցիչ

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝

ա/ Հայոց Մեծ Եղեռնի 100 - ամյա տարելիցի միջոցառումների ծրագիրը տրամադրել ԱԽ փրկարարական ծառայությանը և առողջապահական կազմակերպություններին:

բ/ Առաջարկել քաղաքային համայնքների ղեկավարներին՝ Համահայկական 6-րդ խաղերի վերաբերյալ հայտերը մինչև հունիսի 1-ը ներկայացնելու մասին:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և աջակցություն ցուցաբերել համայնքների ղեկավարներին համայնքային ծառայության հետ կապված հարցերը օրենսդրության պահանջներին համապատասխան լուծելու նպատակով:

3. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին, մարզպետի օգնականներ Տ. Էվինյանին և Ա. Սարգսյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզի համայնքների կայքէջերի բարելավման և ներկայացվող պահանջներին համապատասխանեցնելու, այդ թվում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի արդյունավետ իրականացման և օգտագործման ուղղությամբ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ